



ԼԱՎԱՇ

LAVASH

Gouache on paper, 1982, 44 x 60cm.

Private Collection



ԵՐՒԱՆԴ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

1916

YERVAND NAHABEDIAN

Ե. Նահապետեանն ստեղծել է թէ՛ մանրանկարչական բնոյթի գործեր (ճարտարապետական յուշարձանների ներքին տեսարաններ), թէ՛ բնանկարներ, և թէ՛ կենցաղային ժանրի նկարներ: Միանգամից ճանաչելի է նկարչի հասուն, հնուտ ձեռքը: Նրա վարպետութիւնն ակներև է նաև պատկերների հետաքրքիր, աշխուժ գծային կառուցածքի մէջ: Թույմ է, թէ պատկերող նիւթի բարդութիւնը նկարչի սովոր տարերքն է: Այս տեսակետից Շահ-Մզկիթի և Սբ. Ամենափրկիչ վանքի ներքին յարդարանքի պատկերումները, իրենց ճոխութեամբ, ուղղակի բացառիկ են: Այստեղ ուշադրութիւն է գրաւում և այն, որ թէև պատկերի ամբողջ մակերեսը զբաղեցնում են զարդանաշխեր, ջահեր, սրբանկարներ, ծիսական զանազան իրեր, բայց այդ ամբողջը ենթարկւած է հեռանկարի և լուսաստեղծային խիստ կանոններին ու ծառայում է նկարչի բուն խնդրին՝ տարածական վեհաշուք մթնոլորտի տպաւորիչ արտայայտմանը:

Տարածական, օդային մթնոլորտը նոյնքան իրատիպ է լուծում Նահապետեանը նաև իր բնանկարներում, էտիւներում, լոյսի ցուրքերով ակոսած արևելեան աղմկող շուկայ ներկայացնող ժանրային գործերում: Բնանկարների շարժուն կորիզը դիտողին տպաւորում է շնորհիւ հորիզոնի վրայ ձգող կապտաւուն, յափտենական անդորրով շնչող լեռների շղթայի:

Նահապետեանը ծնել է Նոր-Ջուղայում: Միջնակարգ ուսումն ստացել է Իսֆահանի անգլիական քոլէջում: 1923-33 թականներին աշակերտել է մեծանուն Սարգիս Խաչատուրեանին, որ այդ տարիներին գտնուում էր Իրանում և արւեստի դպրոց ու թանգարան էր հիմնել: Նահապետեանը մասնակցել է բազմաթիւ ցուցահանդէսների: Ֆրեզնոյում կազմակերպւած նրա ջրաներկ գործերի ցուցահանդէսի մասին հիացմունքով են արտայայտել թերթերը: Նկարչի բազմաբնոյթ գործերը (աշխատել է նաև գուաշով ու իւղաներկով) յագեցած են իրականութեան հանդէպ ջերմ սիրով ու նուրբ քնարականութեամբ:

Yervand Nahabedian created both works with a miniature painting style (the inner views of historic monuments) but also landscapes, and paintings depicting life. His mastery is also evident in the interesting and lively lines of construction. It seems as if the complexity of the painted object's materials are a usual element of the artist. The depiction of the inner parts of the Shah Mosque and the Holy Savior Church, with their fullness, are exceptional. What also captures the attention is that although the entire surface of the painting is covered with lanterns, holy icons, and various ritual objects, but all is subject to the perspective, and to the strict rules of light and dark, and serves the artist's true purpose, the expression of an impressive sublime atmosphere.

The expanse and weather is similarly unique, in his landscapes, his studies, the crowded Oriental markets with furrows of light rays. The core of his landscapes impress the viewer thanks to the blue color chain of mountains peacefully drawn across the horizon.

Nahabedian was born in New Julfa. He received his middle education from the English College of Isfahan. In 1929-1933 he was a student of S. Khachatourian, who was in Iran in those days, and had founded an art school and museum. Nahabedian participated in numerous exhibitions. The newspaper reported in admiration at his exhibition of water-color works exhibited in Fresno, California. Many of his multimedia works, utilizing both gouache and oil, are filled with a warm love and subtle lyricism towards reality.



ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԽՈՐԱՆԸ, ՆՈՐ ՋՈՒՂԱ, ԻՍՖԱՀԱՆ
THE ALTAR AT ALL SAVIOR MONASTERY, NEW JULFA, ISFAHAN
Watercolor on paper, 1977, 85 x 59cm.
Private Collection, Iran



ՄԶԿԻԹԻ
ԶԱՐԴԱՍԻՒՆԵՐԻ

DECORATED
OBELISKS

Watercolor on paper,
1972, 53 x 73cm.

Private Collection, Iran



ՇՈՒԿԱ

BAZAAR


Watercolor on paper
1977, 68 x 52.5cm.

Private Collection, Iran

ՏԵՄԱՐԱՆ
ԻՆՅԱՆԱՆԻՑ

A SCENE FROM
ISFAHAN

Watercolor on paper,
1994, 55 x 75cm.
Private Collection, Iran



ՄԱՐԱՆԻ
ԿԱՄՈՒՐՁ

THE BRIDGE OF
MARAN

Watercolor on paper,
1992, 53 x 73cm.
Private Collection, Iran



ՄԱՐՈՒՄԻԱ (ԱՌԱՔԷԼԵԱՆ) ՎԱՀՐԱՄԵԱՆ

1919

MARUSIA (ARAKELIAN) VAHRAMIAN

Նկարչական բնատուր ձիրքով օժտուած նկարչուհի Մ. Վահրամեանը ծնել է Արմավիր քաղաքում: Դեռ փոքր է եղել, երբ ընտանիքը տեղափոխել է Թարիզ: Սովորել է հայկական գիմնազիայում, այնուհետև, նկարչական արեստում խորանալու նպատակով, հետևել Մոսկուայից եկած Գր. Վահրամեանի դասընթացներին:

Շուտով ի յայտ են գալիս Մարուսիայի ընդունակությունները: Նրա պատկերներն սկսում են երևալ Գր. Վահրամեանի ու նրա սաների գործերի ցուցահանդեսներում, արժանանում դրատանքի: Մարուսիայի նախասիրությունը հակում է դեպի նատիւրմորտի ժանրը: Առաելաբար պատկերում է ծաղկեփնջեր ու պտուղներ: Այստեղ նկատելի է ուսուցչի, իսկ 1958-ից արդէն ամուսնու արեստի ազդեցությունը: Այն հիմնականում արտայայտում է պատկերի կառուցման դասական սկզբունքների, առարկաների ձևերի ու նիւթական յատկանիշները շեշտող գունա-գծային լուծումների մէջ: Ի տարբերութիւն Գր. Վահրամեանի, որի նկարներում ֆոնները զուսպ են ու միագոյն, Մարուսիան օգտագործում է խորութիւն ստեղծող տարածական լուսային էֆէկտներ: Շնորհիւ դրա՝ առարկաները որոշակուս են իրենց ծաալով, իսկ երկար ցողուններով ծաղիկներն ստանում երգող ձևեր: Մ. Վահրամեանի նատիւրմորտերի սթնլորտը խորհրդաւոր է, միաժամանակ յագեցած կենսաթրթիւն յոյզերով:

Գունեղ վրձնի տէր արեստագիտուհին հեղինակել է նաև Ռէզայէի և Մարաղայի գողտրիկ անկիւններից քաղած տասնեակ բնապատկերներ: Թարիզի արեստի դպրոցում նա երկար տարիներ պաշտօնավարել է որպէս տեսուչ և նկարչութեան ուսուցիչ:

Marusia Vahramian, endowed with a native talent for art, was born in the city of Armavir. She was still a young child when her family moved to Tabriz. She studied at the local school, and then with the purpose of learning more about art, she studied under Gr. Vahramian, who had newly arrived from Moscow.

Marusia's capabilities soon became apparent. Her works began to appear with works of other graduates of Vahramian in many exhibitions and her work earned plaudits. Marusia preferred still-lives as her favorite genre and depicted mostly bouquets of flowers and fruit. The artistic influence of her teacher, and by 1958 her husband, can be seen in her work. His influence was felt in the classical principles of construction of the painting, in the solution of the forms of objects and in the emphasis on material characteristics of color. In contrast to Gr. Vahramian, whose works were restrained and uniform in color, Marusia utilized expansive light effects which created depth. Thanks to that ability, he objects are characterized by their expanse, and the flowers achieved a musical form. Marusia Vahramian's still-lives are mysterious, but at the same time filled with a living emotion.

The artist also created a dozen or more paintings depicting the tender corners of the villages of Riza and Maraza with her colorful brush. She served for many years as principal and art teacher in the Tabriz art school.



ՓՈՐՐԻԿ ՄՊԻՏԱԿ ԾԱՂԻԿՆԵՐ

LITTLE WHITE FLOWERS
Oil on canvas, 1965, 45 x 60cm.
Artist's Collection



ԲՈՒԴԱԴՆԱՆՆԵՐԻ ԲԱԿ,
ԹԱԻՐԻԶ

BOUDAGHIANS' COURT YARD
Oil on canvas, 1954, 45 x 60cm.
Satoush Oghasabian Collection
London, England



ՕՍՍԱՆԻ ԳԻՐԿԻ
ՃԱՆԱՊԱՐՏԻՆ

ON THE WAY TO THE
VILLAGE OF OSSALU
Oil on canvas,
1950, 45 x 60cm.
Satoush Oghasabian Collection
London, England



ՄԵՐ ԲԱԿԻ ԾԱՆԿՆԵՐԸ
FLOWERS OF OUR GARDEN
Oil on canvas,
1975, 42 x 58.8cm.
Satoush Oghasabian Collection
London, England



ԱՒԱԳ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

1926

AVAG HAIRAPETIAN

Ա. Հայրապետեանը ծնել է Թարիզում: Ազգային նախակրթարանում սովորելիս գծագրության մէջ դրսևորած ընդունակութիւնները կանխագծում են նրա հետագայ մասնագիտական ուղին:

1941 թականից շուրջ մէկ տասնամեակ նա աշակերտում է յայտնի բանաստեղծ ու նկարիչ Մ. Ղարաբէկեանին (Դև), կոփում նրա ձեռքի տակ: 1951-ին մեկնում է Եւրոպա: Լինելով ռեալիստական նկարչութեան աւանդոյթների հետևորդ, Հայրապետեանն այստեղ հրապուրում է իմպրեսիոնիստներով: Անդրանիկ ցուցահանդէսներից ու անդրանիկ յաջողութիւններից յետոյ նա վերադառնում է ծննդավայր ու արդէն սեփական արեստանոցում ամբողջութեամբ նիւրում է ստեղծագործութեան:

Հայրապետեանն աշխատում է իւղաներկով, մասամբ էլ ջրաներկով: Հաւասար յաջողութեամբ վրձնում է դիմանկարներ, բնապատկերներ, ինչպէս նաև բազմամարդ թեմատիկ կտաւներ: Նա իրանահայ նկարիչներից առաջիններից էր, որն անդրադարձաւ 1915-ի ազգային ողբերգութեան թեմային: Հայաստանի պետական պատկերասրահում պահուած է նկարչի նիւրաբերած մի կտաւ, որը պատկերում է հայ գիւղացիների գաղթը: Նկարը ուշագրաւ է իր կառուցածքով: Առաջին հերթին տեսնում ենք գլխահակ, տխուր, մտածկոտ ծերունիների: Յաջորդ շարքի մէջտեղում դիտողի ուշադրութիւնն է գրաւում կուրծքը բաց, ընտանիքի հետ անվիատ քայլող մի երիտասարդ: Այս կերպարը զետեղուած է յօրինուածքի ճիշդ կենտրոնում, դառնալով պատկերի առանցքը: Նկարիչը դիտողի հայեացքը բևեռում է հէնց նրա վրայ, իր ստեղծագործութեանը հաղորդելով լաւատեսական ոգի: Աշխատանքը լուծուած է իմպրեսիոնիստներին յատուկ հնչեղ գոյների ու ազատ վրձնաքսւածքների շարակցմամբ: Այս պարագան նպաստում է նկարի բովանդակութեանը ներդաշնակ աշխուժ ու շարժուն մթնոլորտի ստեղծմանը:

Կատարման այս սկզբունքով են ամբողջացած նաև Հայրապետեանի ժողովրդական կեանքից քաղուած մոտիւներն ու բնանկարները, որոնց միահիաւում է քնարական տրամադրութիւնը, լուռ թախծի յոյզերը:

1980-ին Հայրապետեանը բնակութիւն է հաստատել ԱՄՆ-ում:

Avag Hairapetian was born in Tabriz. While studying at the Armenian national school his talent in art became apparent and was a precursor for his future career.

From 1941 on, for a period of about ten years, he was an apprentice of the poet and artist M. Gharabekian (Dev) and was trained by him. In 1951 he left for Europe. He was a follower of the realistic traditions in art, but became enamored of impressionism while in Europe. After initial successes in exhibits, he returned to his birthplace and in his own studio devoted himself completely to art.

Hairapetian worked with both oils and water-colors. He painted equally well portraits, landscapes, and thematic canvases. He was the first of the Iranian-Armenian artists, who painted with the themes of the 1915 national massacres. In the National Gallery of Art in Armenia, one of the artists canvases is kept, which depicts the deportation of an Armenian village. The painting is interesting in its construction. At first glance one sees old villagers with bowed heads, and sad expressions. In the second line, there is a young man with chest bared, who is walking undiscouraged, with his family. This figure is placed in the exact center of the composition, becoming the axis of the painting. The gaze of the viewer is thus centered on this figure, giving his painting an optimistic spirit. The work solves the colors and free brush strokes of the impressionists. This condition benefits the paintings contents by the creation of a harmonious, vital, and moving atmosphere.

Hairapetian's paintings, which deal with themes from national life and natural scenes are done in the same style, where there is a lyrical logic, and quiet emotion of grief.

In 1980 Hairapetian settled in the United States.



ԳԱՂԹ

MIGRATION

Oil on canvas, 1961, 70 x 100cm.

National Gallery of Armenia, Yerevan



ԹԷՅԱՎԱՃԱՄ
ԾԵՆՈՒՆԻՆ

TEA SELLING
OLD MAN

Oil on canvas
1972, 72 x 102cm.
Private Collection, Iran



ՄԱՅՐԱՄՈՒՏԸ
ԳԻՒՂՈՒՄ

VILLAGE AT SUNSET
Oil on canvas

1973, 75 x 95cm.
Private Collection, Iran



ԵՐԱԺԻՇՏՆԵՐ՝ «ՆՈՎՐՈՒԶ»Ի ԺԱՄԱՆԱԿ (ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻ)

FOLK MUSICIANS DURING "NOVROUZ" (IRANIAN NEW YEAR)

Oil on canvas, 1974, 72 x 103cm.

Private Collection, Iran



ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

1926

HRAIR KARAPETIAN (JUDIK)

Ծնել է Թեհրանում, սովորել տեղի ամերիկեան քոլեջում, նկարչությամբ զբաղել է մանուկ հասակից: Նկարել է մատիտով, սև մելանով, իդաներկով, սակայն գերադասել է ջրաներկը: Մշակել է պատկերման ուրոյն ոճ, իրակերպ ձեռագիր: Հիմնականում ստեղծել է բնանկարներ, որոնք աչքի են ընկնում իրապաշտական ընկալմամբ: Մանրամասերի բծախնդիր մշակումը չի խանգարում նկարչին հասնելու խորհրդանշական, խորհրդաւոր արտայայտչականութեան, օժտել տեսարանը ներքին յուզականութեամբ, բանաստեղծական շնչով:

1990-ին Կարապետեանը տեղափոխել է ԱՄՆ, անհատական ցուցահանդես ունեցել Գլենդէլում:

Hrair Karapetian was born in Tehran, studied at the local American college, and became an artist at an early age. He drew with pencil, black ink, oil, but his water-colors are considered his best works. He developed a unique and distinctive style. He primarily painted landscapes, which capture a realistic sense. The paintings, of exceptional detail, did not disrupt the artist from achieving a symbolic, mysterious expression, of scenes with inner emotion and a poetic breath.

In 1990 Karapetian moved to the United States and held a one-man show in Glendale, California.



ԼԻՃԸ

THE LAKE
Watercolor
1981, 40 x 50cm.
Private Collection



ՋՐԱՇՈՒՇԱՆՆԵՐ

WATER LILIES

Watercolor on paper, 1995, 40 x 30cm.

Alice Navasargian Collection, Glendale, California



ՄԱՂԱՐԴ

FOLIAGE

Watercolor on paper, 1978, 50 x 60cm.

Private Collection



ՉՄԱՆ ՈՒՂԻ

WINTER ROAD

Watercolor, 1982, 30 x 40cm.

Private Collection



ՔԼԱՐԱ ԱԲԳԱՐԵԱՆ
(Աբգար)

1922-1995

CLARA ABGARIAN
(Abgar)

Տաղանդաւոր նկարչուհի Քլարա Աբգարը ծնել է Թեհրանում: Մասնագիտական կրթութիւն է ստացել Իրանի մայրաքաղաքի գեղարւեստի օրիորդաց դպրոցում: Պարապել է նաև նկարիչ Դևի մօտ: Տակում ցուցաբերելով դէպի զարդանկարչութիւնը, խորացել է մանրանկարչութեան մարզում:

Միրոյ, յոյսի, ազատ ու անկաշկանդ թեմաներ շօշափող իր վաղ գործերում Աբգարը հանդէս է բերել նուրբ վարպետութիւն, որի շնորհիւ ցուցահանդէսներում արժանացել է բարձր դրատանքի: Նրա արտայայտչական լեզվի աչքի ընկնող յատկանիշը գծերի սահունութիւնն է, երգեցիկութիւնը: Այս առանձնայատկութիւնը փայլուն դրսևորում է գտել «Միրոյ ըմպելիքը» նկարում, որն ունի աւարտուն գծային կառուցւածք և տոգորւած է երաժշտականութեամբ:

Աբգարի մանրանկարչական աշխատանքերից ուշագրաւ են ձիարշաւ պատկերող տեսարանները, վարդերով նատիւրմորտերը, Օմար Խայեամի, Շէյխ Աթթարի, Շէյխ Ահմադէ Ջամիի դամբարանների, Ֆիրուզ Աբադի, Ալի Աբատ Քաշմարի աշտարակների պատկերումները, որոնք համարւել են Խորասանի նկարահանդէսի լաւագոյն գործերը և ձեռք են բերել իրանական ազգային արւեստի թանգարանների կողմից:

Աբգարի լաւագոյն աշխատանքներից է իր նախագծով ստեղծւած «Դաշինքի Պսակը» (ակնագարդ արծաթի վրայ), որն իրանահայութեան կողմից նւիրւել է Արիամեհի արքային, նրա թագադրութեան առիթով:

Զարդակերպերի հմուտ հեղինակող Աբգարը Իրանի գեղարւեստից կազմակերպութեան անդամ էր: Ունեցել է բազմաթիւ ցուցահանդէսներ: Նրա ստեղծագործութիւնը լայն ճանաչում է վայելում Իրանում: 1995-ին, Իրանի իսլամական կառավարութեան որոշմամբ՝ Սաադ Աբադ պալատի այգում ստեղծվում է Քլարա Աբգարի գործերին նվիրւած թանգարան:

The talented artist Clara Abgar was born in Tehran and attended the local Haigazian school. She received her specialized education in the Iranian capital's Art School for Women. She also spent time with the artist Dev. Showing an inclination toward decorative art, she became an expert in miniature paintings.

Abgar, in her early works, demonstrates the unrestrained themes of love and hope, in her subtle mastery, thanks to which she merited much praise in her shows. The most impressive part of her art was in the movement of lines, in the songs. This feature found a shining example in the work "The Love Potion," a painting which has a line drawing and is full of music.

Abgar's miniature paintings are interesting for their scenes with horses, still-lives with roses, the depictions of the graves of Omar Khayam, Sheikh Attari, Sheikh Ahmade Jami and the towers of Ferouz Abadi, Ali Abad Kashmari, which are considered among the best works of the Khorasan show and have been obtained by the Iranian national art museums.

One of Abgar's best works is "The Wedding of Dashink" drawing, engraved on silver, which was donated on behalf of the Iranian-Armenian community to King Ariame, on the occasion of his enthronement.

Abgar, an authoritative creator of decoration, was a member of the Iranian Art organization. She has had many exhibits and her work has enjoyed great fame in Iran. In 1995, by the command of the Islamic government of Iran, a museum bearing the name Clara Abgar was constructed in the gardens of the Saad Abad, where her significant works are exhibited.



ՄԻԶԴԱՆ-ԲԷ-ԴԱՐ (ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻ)
13TH DAY OF "NOVROUZ" (IRANIAN NEW YEAR)
Oil on canvas, 1972
Klara Abkar Museum, Tehran, Iran



ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

OMAR KHAYYAM SERIES
Watercolor, 23 x 18cm.
Klara Abkar Museum, Tehran, Iran



ԵՈՒՍԷՖ ԵՒ ԶՈՒԷՅԻԱ (ՍԻՐԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

YOUSEF AND ZOLEYKHA (LOVE STORY)

Watercolor, 23 x 45cm.

Klara Abkar Museum, Tehran, Iran



ՍՈՒԼՔԱՆ ՍԱՆՋԱՐ ԵՒ ԾԵՐ ԿԻՆԸ
 SULTAN SANJAR AND THE OLD WOMAN
 Watercolor
 Klara Abkar Museum, Tehran, Iran





ՄԱՆՐԱՆԿԱՐ
 MINIATURE
 Watercolor
 Klara Abkar Museum, Tehran, Iran

ԽՆՁՈՅՔ

BANQUET

Watercolor

Klara Abkar Museum, Tehran, Iran




ԿԱՒԱԳՈՐԾԸ

POTTERY MAKER

Watercolor

Klara Abkar Museum, Tehran, Iran



ԵՍԱՅԻ ՇԱՀԻՋԱՆԵԱՆ

1939-1987

YESAYI SHAHIJANIAN

Ուժերի ծաղկուն շրջանում կեանքից վաղաժամ հեռացած Ե. Շահիջանեանին Իրանի արվեստագետների խորհուրդը յետմահու շնորհում է գեղարվեստի դոկտորի կոչում, որը նրա բազմակողմանի և եռանդուն գործունեության արժանի գնահատականն է: Այդ գործունեության յիշարժան էջերից է մասնակցությունը Իրանի մշակութային կոթողների, յատկապես Իսֆահանի որմնանկարների վերականգման աշխատանքներին: Շահիջանեանը, բացի այդ, ինքնուրոյն որմնանկարչական աշխատանքներ է կատարել Իսֆահանի, Թեհրանի, Նիւ Եորքի մի շարք հիւրանոցային շէքերում:

Շահիջանեանը ծնել է Նոր-Ջուղայում: Տեղի հայկական վարժարանն ասարտելուց յետոյ ընդունել է Իսֆահանի գեղարվեստի դպրոցը, ուր նրա ուսուցիչներ են եղել Ռ. Շիրազին և Մ. Մուլքը: Ապագայ նկարչի գեղարվեստական կրթությանն ու կատարելագործմանը նպաստել է իր երկարամեայ բարեկամությունը յայտնի գեղանկարիչ Ե. Նահապետեանի հետ:

Արվեստի յուշակոթողների նորոգման աշխատանքներին մասնակցելու տարիներին Շահիջանեանը խորապէս ուսումնասիրում է Իրանի պատմության Սաֆաւեան շրջանի մանրանկարչությունը: Նիւթի քաջիմացությունը որոշակի դեր է խաղացել նկարչի արվեստի ոճական առանձնայատկությունների ձևաւորման և իրանական մանրանկարչության աւանդոյթներին մերձենալու խնդրում:

Իսֆահանի որմնանկարներից արւած և Ղաջարի դպրոցի նկարչության մի ամբողջ շարք արտանկարումների հետ մէկտեղ Շահիջանեանը ստեղծում է սեփական մանրանկարչական երկերը («Աւաղ, ջահելութիւնս անցաւ», «Խնճոյք», «Նախճիր», Լայլն), որոնք թէև կրելով իրանեան արվեստի բացայայտ ազդեցությունը, միաժամանակ աչքի են ընկնում կատարման վարպետութեամբ, գեղանկարչական մակերեսի յագեցւածութեամբ, դեկորատիւ-զարդային հարուստ երևակայութեամբ:

Ջահիջանեանը ստեղծել է նաև ժողովրդական կենցաղն արտացոլող ջրաներկ գործեր:

Yesayi Shahijanlian died at an early age in the prime of his artistic and prolific life. He posthumously was awarded the title of Doctor of Art by the Art Committee of Iran, which was a fitting memorial to his talents. Among the memorable works which he participated in were the monumental cultural works of Iran, especially the reconstruction of murals in Isfahan. Shahijanlian, aside from that, completed a number of unique murals in hotels in Isfahan, Tehran, and New York. Shahijanlian was born in New Julfa. After graduating from the local Armenian school, he was accepted to the Art School of Isfahan, where his teachers were R. Shirazi and M. Molk. His long-time friendship with the famous painter Y. Nahapetian greatly enhanced his art education and perfection of his art.

During the years when he was working of the renovation of architectural monuments, Shahijanlian was deeply studying the miniature painting of the Safavid period in Iranian history. His deep knowledge of the subject played a decisive role in the formation of the artists's characteristic style, and the issue of the influence of Iranian art.

Along with creating the mural of Isfahan and the painting of the Ghajari school, Shahijanlian created a series of unique paintings, "Alas, My Youth Has Passed," "Party", "Massacre," and others, which, although bearing a clear Iranian influence, at the same time captured the eye for their mastery of the art, the fullness of artistic talent, the rich decorative and artistic imagination.

Shahijanlian also created a series of water-color paintings which reflected the life of the people.

ՄԱՆՐԱՆԿԱՐ

MINIATURE

Watercolor

Magda Garakhanian Collection, Glendale, California



ՄԱՆՐԱՆԿԱՐ

MINIATURE

Watercolor

Alek Zarifian Collection, Glendale, California

105



ՄԱՆՐԱՆԿԱՐ

MINIATURE

Watercolor, 1969, 102 x 69cm.

Private Collection



ՄԱՆՐԱՆԿԱՐ

MINIATURE

Watercolor, 1969, 109 x 69cm.

Private Collection



ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍԵԱՆ

1938

ARTHUR SARKSIAN

Բնիկ Թեհրանցի Ա. Սարգսեանը նկարչական գիտելիքները ձեռք է բերել Աազ Նայրապետեանի ստուդիոյում: Սիրում է պատկերել գիւղական տեսարաններ, արևելեան մարդաշատ շուկաներ: Արդիական երանգ ունեցող նրա պատկերների գունազօրային կառուցածքը, ինչպէս և լուսաստվերների կտրուկ հակադրումները ստեղծում են պատկերների բովանդակութեանը համահունչ դինամիկ աշխուժութիւն, մի տեսակ անհանգիստ մթնոլորտ: Պատկերման նոյն սկզբունքին են ենթակայ զօրային հակիրճ շեշտադրումներով լուծած ու այլազան շարժումներով ներկայացած մարդկային ֆիգուրները: 1978-ին Սարգսեանը բնակութիւն է հաստատել Լոս Անջելոսում:

A native of Tehran, Sarkisian was trained in the art studio of Avag Hairapetian. He likes to portray village scenes and the crowded Oriental markets. The color structure and modern color created a dynamic vitality in his paintings, a kind of uncomfortable atmosphere. His human figures also were portrayed with the same artistic style with their brief movements. In 1978 Sarkisian moved to Los Angeles.



ՓՈՂՈՑ ԹԵՆՐԱՆՈՒՄ

STREET IN TEHRAN

Oil on canvas

1972, 44 x 58cm.

Private Collection, Tehran



ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԲՈՒՄԵԱՆ

1941

ANDRANIK BABOUMIAN

Ա. Բաբումեանը ծնունդով Թեհրանցի է, սովորել է Զուշեշ-Դավթեան դպրոցում: Պատկերման սկզբունքը իրապաշտական է: Նախասիրած ժանրերն են բնանկարն ու առաելաբար ծաղիկներ պատկերող նատիւրմորտերը: Գիւղական գողտրիկ անկիւններ ներկայացնող իւղաներկ կտանների բնորոշ տրամադրութիւնը ջերմ քնարականութիւնն է: Շնորհիւ հիւթեղ, թրթռուն գոյների նրբին խաղերի, նկարիչն իր աշխատանքները յագեցնում է երազային, ոռմանտիկ բովանդակութեամբ:

Բաբումեանն ունեցել է մի շարք ցուցահանդէսներ Զալիֆորնիայում: 1978-ին հաստատել է Գլենդէլում (Զալիֆորնիա):

Andranik Baboumian was born in Tehran and studied at the Kushesh-Tavtian school. His artistic principle is realistic. His preferred genres are landscapes and most of all still-lives which incorporate flowers. His oil paintings depict the delicate corners of villages, with a warm lyricism. Thanks to the full, bright, and subtle play of colors, his paintings have a dreamy and romantic feel.

Baboumian has had a series of shows. In 1978 he settled in Glendale, California.



ԳԻՒՂԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ

VILLAGE SCENE
Oil on canvas, 1964,
28 x 32cm.

Maral & Nikola
Markarian Collection,
Lacañada, California



ԻՐԱՆԱՀԱՅ ԱՐԻԵՍՏԱԳԷՏՆԵՐ

ԱՐԴԻ ՆԿԱՐԻՉՆԵՐ

Նոր սերնդի իրանահայ արվեստագետների մեծ մասը միայն ծնունդով ու պատանեկության շրջանով է կապված իր բնօրրանին: Մեկնելով այլ երկրներ ու այնտեղ մասնագիտական կրթություն ձեռք բերելով նրանք շարունակել են ապրել ծննդավայրից հեռու, գլխավորապես Անգլիայում, Գերմանիայում, Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Միանգամայն բնական պիտի նկատել, որ նրանց ստեղծագործական որոնումները, յատկապես արտայայտչական լեզվի տեսակետից, առնչել են արդիական ուղղությունների՝ առաելապես տպավորապաշտական, վերացական, գերիրապաշտ ու կոնսեպտուալ արվեստի սկզբունքներին: Այս պարագան բնորոշ է ոչ միայն Իրանից, այլև Մերձավոր Արևելքի այլ երկրներից երոպայում կամ ԱՄՆ-ում ապրող շատ արվեստագետների: Պիտի նշել նաև, որ ստեղծագործական մեթոտներով իրար մերձենալու, իրար նմանելու միտումը կամա-ակամայ դարձել է ժամանակի պահանջ և յատուկ է տարբեր երկրների արվեստագետներին ընդհանրապես:

Յայտնի է, սակայն, որ գեղարվեստական մշակոյթի զարգացման մէջ առաջնային պայմանը ստեղծագործողի անհատականությունն է, և՛ ասելիքի, և՛ սեփական աշխարհընկալման, և՛ սեփական արտայայտչալեզվի հաստատման առումով: Յիշենք, օրինակ, 20-րդ դարի խոշորագոյն նկարիչները մէկին, ԱՄՆ-ում ապրած Արշիլ Գորկուն (Ոստանիկ Ադոյեան): Նա մինչև վերջ հաւատարիմ մնաց սանկութեան յիշատակներին, ապրեց այդ յիշատակների կարօտով, իբրև հայրինիքից պոկած մի բեկոր: Մեծ մաքառումների գնով նա ժամանակակից արվեստում հաստատեց իր սեփականը, «գորկիականը», նոր ճանապարհ բացելով գերիրապաշտութեան մէջ: Պատահական չէ, որ ի վերջոյ Գորկին համարեց ամերիկեան-հայկական նկարիչ:

Գորկու արվեստը սեփական ներաշխարհին հարազատ մնալու բացառիկ օրինակ է, բանաստեղծ Ե. Չարենցի խօսքով ասած՝ «ժամանակի շունչը դառնալու, սեփական քնարին չդաւելու» փայլուն ուղենիշ-մեկնակէտ:

Այս ճանապարհով են ընթացել սփիւռքի մեր լաւագոյն նկարիչները: Նոյն ուղին ընտրել և ընտրելու են նոր սերնդի արվեստագետները, որոնք անկախ նրանից թէ ո՞ր երկրում են ապրում, արդի արվեստի ո՞ր ուղղութեան են յարում, նրանց ստեղծագործութեան խորքում տրոփելու է հոգու դաշտից սնուող ազգային նկարագրի զարկերակը:

IRANIAN-ARMENIAN ARTISTS


MODERN PAINTERS

The majority of the new generation of Iranian-Armenian artists are tied to their homeland only by birth and childhood. Departing for other countries and receiving special training there, they continue to live far from their birthplace, primarily in England, Germany, and in the United States. It is natural to assert, that their artistic search, especially in the realm of a language of expression, is connected to modern movements, especially to expressionism and to the principles of abstract and conceptual art. These conditions apply not only to the artists of Iran, but also to many of those who live in the Middle East, Europe and United States. One can also point out that the similarity of techniques and the tendency to look alike, willingly or unwillingly, has become a need of the time and is distinct to the artists of other countries in general.

It is apparent, however, that the individuality of the artists is the most important condition in the development of artistic culture, both in the sense of what they have to say, their own world-view, and to establish their own language of expression. Let us mention, for example, one of the greatest artists of the 20th century, Arshile Gorky (Vostanik Adoian), who lived in the United States. He remained true until the end to his childhood memories; he lived with the longing of that memory, as a fragment plucked from his homeland. He established his own style of "Gorkyism" in contemporary art at a great cost and struggle, opening a new path in surrealism. It is not accidental that Gorky was considered finally, as an American-Armenian painter.

Gorky's art is an exceptional example of remaining true to an inner world, as the poet Y. Charents said, "He became the breath of his time, he did not give up his own lyre, he became a guide-interpreter."

The best artists of the Diaspora also have followed this path. The new generation of artists are also choosing and have chosen the same direction, and independent of the country that they live in, and of the artistic movement that they follow, in the depths of their art there is beating the pulse of a national character nourished in the fields of the spirit.



ՄԱՐԶՈ ԳՐԻԳՈՐԵԱՆ

1925

MARKO GRIGORIAN

Իրանի գեղարվեստասերների շրջանում արդեն յայտնի նկարիչ էր Մ. Գրիգորեանը (ծնել է Կրոպոտկինում, 1930-ին մեկնել Թեհրան), երբ 1950-ին ընդունեց Հռոմի գեղարվեստից ակադեմիան, ուր շուրջ տաս տարի աշխատեց, ցուցահանդեսներ ունեցավ Հռոմում, Փարիզում, Լոնդոնում: Իտալական շրջանի իրապաշտական գործերին յաջորդեցին նոր-արտահայտչապաշտական բնոյթի աշխատանքներ, մի հանգամանք, որ բնական և ինքնատիպ արձագանքն էր պատերազմի ծանր տարիներից յետոյ Երոպայում իշխող արվեստի այն ուղղութիւնների, որոնց թեման մարդկային տխրութիւնը, ճնշածութիւնն ու տառապանքն էին: Գրիգորեանը ստեղծեց մեծադիր կտաւներ՝ նւիրած ցեղասպանութեան տառապելիներին ու իր հայրենակիցների՝ Վանի գաղթականներին: Այդ նշանակալի գործերում ձևախեղումները (deformation), ինչպէս նաև ներկերի խառնուրդի մէջ օգտագործած հողն ու մոխիրը նպատակային են ու ատելի ազդեցիկ են դարձնում պատկերների յուզական բովանդակութիւնը:

Յաջողութիւն գտած արվեստագետը վերադառնում է Իրան: Այստեղ նա հիմնում է «էսթետիկ» պատկերասրահ-ստուդիան, իր շուրջն է համախմբում արվեստին կոչւած նոր ուժեր (Է. Այվազեան, Ս. Մելքոնեան, Ռ. Ոսկանեան, իրանցի նկարիչներ), որոնք որդեգրում են ազատ, անկաշկանդ արտայայտելու ուղին:

1962-ին Մ. Գրիգորեանը հաստատում է Նիւ Եորքում, հիմնում է ցարդ գործող Արշիլ Գորկու անունը կրող մի պատկերասրահ: Այն դառնում է նկարչական արվեստի իրատեսակ կենտրոն:

Մ. Գրիգորեանի ստեղծագործութեան վերջին շրջանը նւիրած է հողի թեմային՝ իբրև մարդկային բարձրագոյն գործունէութեան ասպարէզ, հիմք ու գաղափար:

1990-ականների սկզբին, երբ Հայաստանը հռչակեց անկախ պետութիւն, Գրիգորեանն իր և դստեր՝ Սաբրինայի ուժերով հաւաքած արվեստի ու արհեստի հնագոյն նմուշների հարուստ հաւաքածոն փոխադրեց իր իսկ հիմնած «Նիյր Իսթ» պատկերասրահը՝ Երևանում: Քիչ ատելի ու նկարիչը Գառնիում հիմնեց իր երկրորդ պատկերասրահ-ստուդիոն, նպատակ ունենալով տարբեր երկրներից հրաւիրած արվեստագետներին «պարզելու» անձանօթ ու անօրինակ մի «ներկայական», որպիսին Հայաստանի բնաշխարհն է:

Marko Grigorian was already a well-known artist among art-lovers in Iran. He was born in Kropotkin and in 1930 left for Tehran. He was accepted in to the Art Academy of Rome in 1950, where he worked for nearly ten years. He had exhibits in Rome, Paris and London. That period of the talented artist's creativity was marked by a stubborn search, in the new expression of the harmony of the inner self and the needs of modern art. In this respect Grigorian became one of the initiators of a new school among Iranian-Armenian artists. Following the Italian realistic style, there followed works of inner expression of nature, a condition, which was a natural and authentic result of the prevailing art styles in Europe after the terrible war years, whose themes were the sadness, oppression and anguish of man. Grigorian created huge canvases devoted to the émigrés from Van. The "deformation" of those works, as well as the mixture of soil and ashes in the paint, increased the impact of the work and the emotional contents of the painting.

The successful artist returned to Iran. He founded a studio/school called "Esthetic" and gather around him a new generation of artists: A. Aivazian, S. Melkonian, R. Voskanian, and other Iranian painters, who adopted an unrestrained and free expressive style.

In 1962 M. Grigorian established himself in New York, and founded a art studio called Arshile Gorky, which is still open today. It became a special center for painting.

The last phase of Grigorian's art was devoted to the theme of the earth, as the field of the highest activities of man, foundation and idea. His compositions of arid scenes were presented as the symbol of the artist's own ideas.

At the beginning of the 1990s, when Armenia declared its independence, Grigorian and his daughter Sabrina founded the "Near East" Museum in Yerevan and transferred a large collection of art works and ancient examples to the fatherland. A little while later, the artist created his second studio/school in Garni, with the purpose of inviting artists from many countries, to give them a new and unfamiliar "palette" which is the nature of Armenia.



ՍՓԻՐԱԼ, ԱԼՖԱ-ՕՄԵԳԱ
SPIRAL ALFA OMEGA
Clay on canvas, 1973, 70 x 70cm.
Artist's Collection, New York




ՎԱՐԴՈՒՇԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ, ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ԲՈՅՐԸ
PORTRAIT OF VARTOUSH, ARCHILE GORKY'S SISTER
Oil on canvas, 1984, 60 x 47cm.
Near East Museum, Yerevan



ԴԷՊԻ ՏՈՒՆ
HOMEWARD BOUND
Oil on canvas, 1953, 45 x 60cm.
Near East Museum, Yerevan

ԿԱՐԼԵՆ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
ԱՐԵՒԼ ԳՈՐԿՈՒԻ ԹՐՈՋ ՏՂԱՆ

PORTRAIT OF GARLEN MOURADIAN
ARCHILE GORKY'S NEPHEW
Oil on canvas, 1984, 60 x 47cm.
Near East Museum, Yerevan



ԺԱՐԼԻՆ
JACKLIN # 2
Oil on canvas, 1952, 60 x 70cm.
Near East Museum, Yerevan



ՌՈՍՏԱՄ ԵՒ ԱՇԽԱԲՈՒՍ ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՑ

ROSTAM AND ASHKABOUS SERIES

Oil on canvas, 1955

Private Collection, Tehran, Iran

ՍՈՒՐԱԲ ՍԵՓԷՏՐԻԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
(Պարսիկ մեծանուն բանաստեղծ)
PORTRAIT OF SOHRAB SEPEHRI
(Iranian famous poet)
Oil on canvas, 1967, 16 x 11cm.
Private Collection, Tehran, Iran



«ԹԵՒԵՐ» ԳԵՏԻ ԵՐԿԱՅՆՐՈՎ
THE "TEVER" RIVER (Rome, Italy)
Oil on canvas, 1953, 63 x 79cm.
Near East Museum, Yerevan



ԱԼՖՈՆՍՕ ԱՒԱՆԷՍԵԱՆ

1932

ALFONSO AVANESIAN

Երգող գոյնի ու լոյսի այս վարպետը լայն ճանաչում ունի Իտալիայում: 1948-ին ընդունել է Տոմի գեղարվեստից ակադեմիան, կատարելագործել Ա. Բարտոլիի ղեկավարությամբ: Իտալական դասական արվեստի աասնդներից սերող Ալֆոնսի նկարչությունն առինքնում է գունային մակերեսի գեղեցկությամբ, երանգների թափանցիկությամբ, արտիստիկ վրձնահարածներով ու պատկերի մտածած ու տպաորիչ գծային կառուցածքով: Նրա բնանկարներն ու պատուհանների առջև ծաղիկներ պատկերող նատիւրմորտները դիտողին են փոխանցում ինչ-որ անբացատրելի թախծի, կարօտի ու մենության զգացումներ: Ալֆոնսոյի արվեստին յատուկ է նուրբ բանաստեղծականությունը:

This master of color and light is a widely known in Italy. In 1948 he was accepted to the Art Academy of Rome, perfecting his work under the artist A. Bartoli. For Alfonso, who loved classical Italian traditions, painting was the beauty of surfaces, the penetration of colors, the artistic brush-strokes and impressive line drawing. His landscapes and still-lives depicting flowers in front of windows communicate to the viewer an unexplainable grief, feelings of longing and loneliness. His art is unique in its subtle lyricism.



ՅՕՐԻՆՈՒՄ
COMPOSITION
Oil on board, 1982
70 x 100cm.
Private Collection
Rome, Italy




ՋԱՄԲԻՆՈՎ ԾԱՆԿԵՐ

BASKET OF FLOWERS

Oil on canvas, 1985, 100 x 80cm.

Private Collection, Rome, Italy




ԻՆՏԵՐՎՈ
INTERVO

Oil on canvas, 1989, 120 x 100cm.
Private Collection, Rome, Italy



ՅՕՐԻՆՈՒՄ
COMPOSITION

Mixed media on board, 1989, 100 x 70cm.
Private Collection, Rome, Italy



ԷԴՄԱՆ ԱՅՎԱԶԵԱՆ

1932

EDMAN AIVAZIAN

Էդման Այվազեանը ծնել է Թեհրանում: Նրան միշտ գրաւել է հայկական գիւղը և գեղջկական մշակոյթը: Իսֆահանի շրջանի Նամակերտ հայկական գիւղում, նա ստեղծել է բազմաթիւ նկարներ և գծանկարներ: Այնտեղ հաւաքում է տպաւորութիւնների, գոյների, ձևերի այնպիսի պաշար, որ հետագայում դրանք ամուր խարիսխ են դառնում իր արդիաշունչ գեղանկարչութեան և իւրատիպ ձևամտածողութեան համար: Է. Այվազեանը դեռ տասնվեց տարեկան հասակում շահում է պատանի նկարիչների միջազգային մրցանակ, իսկ ինը տարի անց՝ Իրանի արդի նկարիչների և Իրանի մշակոյթի նախարարութեան սահմանած առաջին մրցանակը: Նա իր ուսումը ստացել է Լոնդոնի Սըր Ջան քոլէջում:

1950-95 թականներին Է. Այվազեանը բացի տարբեր քաղաքներում կատարած ճարտարապետական ու որմնանկարչական նշանակալի գործերից, կազմակերպում է շուրջ տասնեակ անհատական ցուցահանդէսներ՝ Թեհրանում, Վենետիկում, Լոնդոնում, Բոստոնում և այլուր: 1987-ին նրա նկարահանուէրը բացում է նաև Երևանում, իսկ 1987-ին հրաւիրում է Եւրթա՝ մասնակցելու «Այվազովսկու օրերը Ղրիմում» մշակութային միջոցառմանը: Է. Այվազեանի գործերը հանգրուանել են աշխարհի բազմաթիւ թանգարաններում և անհատ հաւաքածուներում: Լոնդոնում, ուր այժմ բնակւում է նկարիչը, նրա հերթական ցուցահանդէսներից մէկի առթիւ գրել է. «Էդմանի կտաներում դուք չէք տեսնի հոգեկան բարդոյթներ, յուսահատութիւն, տազնապի հետքեր... Պիտի համակէք նրա պատկերների պարզաձև զարթութեամբ, պայծառութեամբ, որ մեր հոգիին մէջ կ'արթնացնէ քաղցր կարօւղ Արևելքին, բնութեանը և մեր հին, բայց չիւնցող օրերուն»:

Նա ստեղծել է 1915-ի մեծ Եղեռնին նւիրած պատկերներ, Կոմիտասի ու Ա. Խաչատուրեանի դիմանկարների շարք, նկարազարդել է Յ. Թումանեանի «Թմբկաբերդի Առումը», «Փարանան», և հայ գրողների այլ գործեր:

Է. Այվազեանն ունի սեփական ձեռագիր: Այն յատկանշում է հնչեղ գոյներով, համարձակ ու ներազդող գունային համադրումներով, լուսաստեղծների խորհրդաւոր խաղերով, արտայայտիչ ձևերով: Նրա կենսահաստատ, լաւատեսական արւեստը ջուր է խմում թէ՛ հեռաւոր և թէ՛ հարազատ աղբիւրներից:

Edman is born in Tehran. He has always been fascinated by Armenian villages and the artcrafts of the villagers. At the Armenian Namagerd village in the region of Isfahan, he created numerous paintings and drawings. There, he has collected impressions, colors, and forms which in the future became the firm foundation for his modern paintings and for his original concept of forms. Aivazian won a medal at international art competition for young people while he was only 16, and nine years later won the first prize bestowed by the modern Iranian painters and Iranian cultural ministry. He has attended Sir John College of London England.

In the years 1950-1995 Aivazian, apart from the important architectural works and frescoes that he made in different cities, organized about twenty individual shows: in Tehran, Venice, London, Boston, and other cities. In 1987 his art exhibition opened in Yerevan and in 1990 he was invited to Yalta to participate in the cultural show "Aivazovskii's Days in the Crimea." Aivazian's works can be found in numerous museums throughout the world and also in individual collections. In London, where the artist now lives, during one of his exhibits the following was written, "In Aivazian's canvases one does not see spiritual complexity, despair, or the traces of crisis... You will be affected by the joyousness of his paintings, which awaken within our souls a sweet longing for the Orient, for nature and for the old, but not ancient days."

Far from his homeland, but filled with memories of his homeland, tied to his people in his paintings, Armenian themes have a special place in his work. He created a series of paintings devoted to the 1915 Genocide, portraits of Gomidas and A. Khatchaturian, and illustrated Hovhanness Toumanian's "The Capture of the Castle of Tmpug" and "Parvana," as well as books of other Armenian writers.

Aivazian has an original style. It is characterized by resounding colors, a synthesis of bold and inner affecting colors, the mysterious interplay of light and shade and forms of expression. His optimistic and life affirming art draws its inspiration from far away and also from authentic sources.




ՆԱՄԱԿԵՐՏՅԻ ՀԱՅՈՒՆԻ

ARMENIAN WOMAN FROM NAMAKERT

Gouache on paper, 44 x 40cm.

Private Collection





ԳՆՉՈՒՆԻՆԵՐ
THE GYPSY GIRLS
Oil on canvas, 1961, 50 x 40cm.
Private Collection, London, England

ԷՉԱՆ ԱՅՅԼԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ
REPAIRING THE WHEEL OF CART (Namakert)
Oil on canvas, 1965, 70 x 60cm.
Private Collection, London, England



«ԼԱՎԱՇ» Նամակերտ
"LAVASH" (Namakert)
Oil on canvas, 1961, 106 x 106cm.
Private Collection, London, England



ԹԷԼ ՄԱՆՈՂ ԿԱՆԱՅՐ
THE SPINNERS (Namakert)
Oil on canvas, 1961, 65 x 110cm.
Private Collection, London, England



ՄԱՐԳԻՍ ԶԱՔԱՐԵԱՆ
(Վասփուր)

1922

SARKIS ZAKARIAN
(Vaspour)

«Աւանդոյթը երբ մահանում է, վերածոււմ է յիշողութեան: Յիշողութիւնը դառնում է քո մասնիկը ու լուսաւորում քո կեանքը...»: Վասփուրի այս արտայայտութիւնը յուշում է, որ իր պատկերները կեանքի լուսատր դրագներ են, որոնք սնում են հեղինակի միտքը, էութիւնը: Եւ ուստի նրա իրաքանչիւր նկարի մէջ կայ ինքը՝ լինի աղաւնու կերպարանք առած, թէ իր հերոսների տխրադալուկ աչքերի նայածք, Զուրխանէի (ուժի տուն) հզօր մկանունքով ըմբիշներ, թէ ժողովրդական տօների հրավառութիւն... կեանքը անվերջ ընթերցող գիրք է արեւստագէտի համար, իր իսկ գիրքը: Եւ նա այդ գիրքը կարդում է հոգու աչքերով, ժպտում, տխրում ու արտասում իր հերոսների հետ, որոնք բոլորն էլ ինչ-որ չափով նաև ինքն են, այլազան կերպաւորում ստացած, սակայն միշտ միայնակ ու մտամոխի և պայծառացած յուշի նման միշտ խօսուն ու կենդանի:

Ամէն ժողովուրդ ունի այսպէս ասած նաև նկարչութիւն: Վասփուրը իրանահայ նկարիչների ընտանիքում եզակի երևոյթ է: Այսօրինակ արեւստին արժանին մատուցեց 20-րդ դարում՝ շնորհիւ դրա տարօրինակ տեսաընկալման, ուրոյն փիլիսոփայութեան, երևոյթների պարզ, մաքուր ընկալման և իրօրինակ արտայայտչալեզւի:

Սէրը Վասփուրի ու նրա նկարչական աշխարհի հանդէպ, նրա ցուցահանդէսների յաջողութիւնը բացատրում է հէնց վերոյիշեալ արժանիքներով:

Նկարիչը ծնել է Թարիզում: Յաճախել է հայկական դպրոցներ: Նկարչութիւն չի սովորել, չի ունեցել ուսուցիչ: Բայց նկարչութիւնը իր մէջ եղել է ի ծնէ, որն անդադար պարտադրել է իր կամքը՝ ստեղծելու անսպասելի գեղեցիկ մի իրականութիւն:

“When tradition dies, it is reborn as memory. Memory becomes your portion and illuminates your life... “ These words of Vaspour remind one that his works are bright episodes of life, which nourish the artist’s soul, his essence. And therefore in each of his works, he the artist is there, whether as the image of a dove, or the sad glance of the heroes, whether the large muscled wrestlers of Churkhane (the house of power), or the bonfires of popular festivals. Life is an unread book for the artists, his own life’s book. And he reads that book, with spiritual eyes, smiles, is saddened, and communicates with the heroes, which are all, to some degree the artist, having other forms, but always alone, but also alive.

Every people has this “naive” art. Vaspour is a unique phenomenon in the family of Iranian-Armenian artists. This style of art began in the twentieth century, thanks to its unusual characterizations, unique philosophy, the capturing of a simple and clean phenomenon and unique artistic style.

Love, towards Vaspour and his artistic world, and the success of his exhibitions are explained because of the aforementioned qualities.

The artist was born in Tabriz. He attended Armenian schools. He was not taught how to paint as he did not have a teacher. But he was by birth an artist, who continuously imposed his will, to create an unexpected and beautiful reality.



ՏԻԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՂԱՍԻՆԸ
THE LADY AND HER MAID
Gouache and watercolor, 40 x 35cm.
Private Collection, Iran



ՍԻՐԱՏԱՐՆԵՐ #1
THE LOVERS #1
Tempera and watercolor, 1969
30 x 45cm.
Private Collection, Iran



ՍԻՐԱՏԱՐՆԵՐ #2
THE LOVERS #2
Tempera and watercolor, 1968
35 x 40cm.
Private Collection, Iran



ԵՈՐ ԶՈՒՆ

THE NEW VICTIM

Watercolor and gouache, 1970, 60 x 80cm.

Private Collection, Iran



ՄԵՆԱԿՈՒԹԻՒՆ
 LONELINESS
 Tempera on cardboard, 1996
 38.5 x 49.5cm.
 Artist's Collection, Glendale, California



ՀԱՐՄԱՑՈՒՆ
 ՀԻՄՆՍԻՑ
 THE BRIDE
 FROM THE NORTH
 1978, 25 x 35cm.
 Artist's Collection,
 Glendale, California


ԸՄԲԵԱՄԱՐՏ ԶՈՒԻՄԱՆՈՒՄ
 WRESTLING IN ZOURKHANEH
 Tempera on cardboard, 1972, 30 x 30cm.
 Artist's Collection, Glendale, California



ԸՄԲԵԱՄԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ
 PREPARING FOR WRESTLING
 Acrylic on canvas, 1972, 100 x 120cm.
 Artist's Collection



ՏԵՍԱՐԱՆ ԱՇՈՒՐԱՅԻՑ
 SCENE FROM ASHOURA DAYS
 Tempera on cardboard, 1974
 43 x 56cm.
 Private Collection



ԿԱՆԱՅԻ ՄԶԿԻԹՈՒՄ
 WOMEN IN THE MOSQUE
 Tempera, 1970, 34 x 42cm.
 Artist's Collection, Glendale, California

ՏԵՍԱՐԱՆ ԱՇՈՒՐԱՅԻՑ

SCENE FROM ASHOURA DAYS

Tempera on cardboard, 1973, 31 x 36.5cm.

Artist's Collection, Glendale, California



ՏԵՍԱՐԱՆ ԱՇՈՒՐԱՅԻՑ

SCENE FROM ASHOURA DAYS

Tempera on cardboard, 1976, 43 x 56cm.

Artist's Collection, Glendale, California



ԱՇՈՏ ՄԻՆԱՍԵԱՆ

1924

ASHOT MINASIAN

Ա. Մինասեանը առաւելապէս նկարում է բնանկարներ: Ընտրած մոտիվին նա յանձնուում է անմնացորդ: Եռանդագին են Մինասեանի վրձնահարածները, զունային մակերեսը՝ ալեկոծ: Նրա քնարականութիւնն արտայայտում է մոխրաւուն, բաց սրճագոյնի ու սպիտակի ներդաշնակումներով: Գարնան շնչով տոգորած անտառ ային տեսարանների կողքին ունի նաև քաղաքային բնանկարների շարք: Դրանցից է «Վենետիկը», ուր իշխում է նկարչին բնորոշ մտերմիկ տրամադրութիւնը:

Նա ծնել է Թեհրանում: Ունեցել է մի շարք ցուցահանդէսներ Իրանում և ԱՄՆ-ում: 1979-ից ապրում և գործում է Բալիֆորնիայում:

Ashot Minasian painted primarily landscapes. In his chosen themes it is as if he painted with fibers. His brush strokes are colorful and the surfaces stormy. That lyricism was expressed in the grays, open brown, and white colors which he utilized. Along with the forests scenes imbued with a spring-like nature, he has a series based on city-scapes. One of those is "Venice" where the artist's unique style is expressed.

Minasian was born in Tehran. He has had several exhibits in Iran and the United States. Since 1979 he has lived and worked in California.



ՎԵՆԵՏԻԿ

VENICE

Watercolor

1995

36 x 54cm.

Private

Collection

Glendale,

California



ԳԱՐՆԱՆ ԲՈՂԲՈՋՆԵՐ
SPRING BLOSSOMS
Watercolor, 1996, 36 x 54cm.
Private Collection, Glendale, California



ԱՐՄԻԿ ՀԱԽԻԵՐԴԵԱՆ

1924

ARMIK HAKHVERDIAN

Ծաղրանկարիչ Ա. Հախերդեանը ծնել է Նոր Ջուղայում: Նրա տեղը իրանահայ նկարիչների շարքում: Հկուն գծերով ու ջրաներկի նրբին երագներով կատարած նրա շարժերն ըստ էության ոչ թէ երգիծանք են, այլ ժպիտ, զարմանքի ու սիրոյ վկայութիւն: Բնատուր շնորհով օժտած նկարիչը դիպուկ որսում է բնորոյի դէմքի, սարմնի, կեցաքթի ու շարժումների բնորոշ գծերը, որոնք ան աւելի է սրում և ներկայացնում միանգամայն հրապուրիչ գեղարւեստական ձևերով: Այդպէս են պատկերւած նազազար Լեվայնը, երգիչ Փաարոտտին և ուրիշներ:

Satiric artist Armik Hakhverdian was born in New Julfa. He holds a unique place among Iranian-Armenian artists. With flexible lines and the subtle hues of watercolor her paintings are not only satiric but happy, a testimony to wonder and love. The artist, endowed with a natural talent, sought to find the native lines of the subject in their face, body, and attitude, which he sharpened, enhanced and presented with a charming artistic form. In this way were pictured the composer Levin, the singer Pavarotti, and others.

ՋԷՅՄՋ ԼԵՎԱՅՆ

JAMES LEVINE

Watercolor, 19.5 x 13cm.

ԼՈՒՉԻԱՆՆՕ ՓԱՒԱՐՈՏՏԻ

LUCIANO PAVAROTTI

Watercolor, 21.5 x 15.5cm.





ՖԻԼԻՓՕ
(Վազգէն Մինասեան)

1924


FILIPO
(Vazken Minasian)

Ստեղծագործական հարուստ կենսագրութիւն ունի Ֆիլիփոն: Ծնւել է Քերմանում: Թեհրանում ստացած միջնակարգ կրթութիւնից յետոյ, 1949-ին մեկնել է Հռոմ: Ինը տարի ուսանել է գեղարեստից ակադեմիայի գծագրութեան, բարձրաքանդակի և ճարտարապետութեան բաժանմունքներում: Մասնակցել է Վենետիկի Բիեննալիներին (1954, 56, 59), ունեցել տասնեակ մենա-ցուցահանդէսներ: 1958-ին հրաւիրւել է Իրան որպէս իտալական ցուցահանդէսի կազմակերպիչ: 1971-ին մասնակցել է Թեհրանի լուսագործման և ղեկորատի յարդարման աշխատանքներին, արժանացել առաջին մրցանակի: Նախագծել և կառուցել է մի շարք հասարակական շէնքեր: Ալբոմում ներկայացած նրա երկու գծանկարները ծանօթութիւն են տալիս նկարչի ու ճարտարապետի՝ Իտալիայում որդեգրած ստեղծագործական գծին և կերպարային արեստի նախահիմքի հաւատամքին:

Filipo has a rich artistic biography. He was born in Kerman. After receiving his secondary education in Tehran, in 1949 he left for Rome. He studied for nine years in the departments of art, drawing, and architecture at the Institute. He participated in the Venice Biennial (1954, 1956, 1959) and has had dozens of one-man shows. He was invited to Iran in 1958 to organize the Italian exhibit. In 1971 he participated in decorative artworks in Tehran, and won first prize. He drew the plans for and built many public buildings. His two drawings in this album introduce the artist and the architect, in the Italian style which he adopted, the line is the basis and the creed of his work.

ԲՆՈՐԴՈՒՏԻՆ, 1 և 2

THE MODEL, 1 and 2
Gouache on paper





ՌՈՍՏՈՄ ՈՍԿԱՆԵԱՆ

1932

ROSTOM VOSKANIAN

Բազմաշնորհ այս արեստագետը ծնել է Թարիզում: Փայլուն աարտել է Իրանի համալսարանի ճարտարապետության բաժինը և որպես խրախուսանք՝ պետության կողմից ուղարկել է Փարիզ, ուր սովորել է գեղարեստի դպրոցում: 1964-ին վերադարձել է Իրան, դասաւանդել համալսարանում: Կառուցել է Թեհրանի հայոց ակումբի սրահը, Արարատ մարզաւանդ, և Սբ. Խաչ եկեղեցին:

Նա նկարել սկսել է մանկուց: 1958-ին Իրանի Բիեննալում արժանացել է առաջին մրցանակի: Բարձր են գնահատել բիրեղապակուց պատրաստած նրա գործերը և լուսանկարները: 1988-ին հաստատել է Լոս Անջելոսում: Վերջին շրջանի կտավները, ինչպէս և «papier maché»-ները սիմբոլիք-վերացական բնոյթ ունեն, հնչել են գոյներով, էքսպրեսիւ կառուցածքով: Այդ գործերը նոր յաջողութիւն են բերել հեղինակին 1994-ին, Լոս-Անջելոսում կայացած ցուցահանդէտում: Նա այժմ ապրում է Բալիֆորնիայում:

This multi-talented artist was born in Tabriz. He graduated with honors from the Architecture School of the University of Iran. He was sent by the Iranian government to Paris, where he studied at the higher Institute of Art. In 1964 he returned to Iran, and taught at the university where he had studied. He designed the Armenian Club Hall in Tehran, the Ararat stadium, and the Holy Cross church, in Tehran.

Voskanyan began painting at an early age. In the 1958 Iranian Biennial he was awarded first prize. His works in crystal were highly regarded as well as his photographs. In 1988 he moved to Los Angeles. His recent paintings as well as his "papier maché" works have a symbolic/abstract nature, are resonant in color, and expressive in their structure. In 1994 these works brought new attention to the artist in an exhibit in Los Angeles. Presently the artist lives and works in Glendale, California.



ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՂԵՑԿՈՒՏԻ

EASTERN BEAUTY

Acrylic on canvas, 1995

60 x 60cm.

Artist's Collection, Glendale, California